

Վայացավ քաղաքացիների ապրիլ ամսվա ընդունելությունը

10.04.2017



2017 թվականի ապրիլի 7-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մոտ տեղի ունեցավ քաղաքացիների հերթական ընդունելությունը: Ընդունելության համար ցուցակագրվել էր 107 քաղաքացի, ընդունելության էին եկել 102-ը: Ընդունելության եկած 99 քաղաքացիներ դիմել էին դրամական աջակցության խնդրանքով, որոնց խնդրանքը բավարարվեց: Մեկ քաղաքացի (բազմազավակ մայր) դիմել էր բնակարանի հարցով, որի դիմումը հաշվառվեց, երկու քաղաքացիներ էլ դիմել էին պետական պատվերով առողջության վերականգման հարցով: Վերջիններիս ուղեգրման հարցն ընթացքում է: